ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով Համաձայնագրի մասնակից պետությունների բնակչության համար հատուկ վտանգ ներկայացնող կարանտինային եւ այլ վարակիչ հիվանդությունների ներկրման ու տարածման կանխարգելման գործում համագործակցության կարեւորությունը, ղեկավարվելով առողջապահության բնագավառում համագործակցությունը շարունակելու եւ ընդլայնելու եւ Կողմերի պետությունների տարածքների սանիտարական պահպանության ուղղությամբ պետական հակահամաճարակային եւ սանիտարահիգիենիկ միջոցառումների համակարգումն ապահովելու ցանկությամբ, ելնելով, Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում պայմանագրերն իրագործելիս եւ առեւտրային ու տնտեսական կապերը զարգացնելիս, Կողմերի պետությունների տարածքները բնակչության առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող ապրանքների ու բեռների ներկրումից եւ իրացումից կանխարգելելու շահերից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերն կիրականացնեն սանիտարակարանտինային հսկողության անհրաժեշտ միջոցառումներ Կողմերի պետությունների սահմանների անցման կետերում՝ կարանտինային եւ այլ վարակիչ հիվանդությունների Ցանկին եւ սանիտարակարանտինային հսկողության ենթակա ապրանքների ու բեռների Ցանկին (հավելված 1-ին եւ 2-րդ) համապատասխան: Այդ ցանկերը կարող են փոփոխվել Անկախ Պետությունների Համագործակցության առողջապահության բնագավառում համագործակցության խորհրդի որոշմամբ: Ապրանքների կամ բեռների սանիտարակարանտինային հսկողության ծախսերը որոշվում են համաձայն ընդունված ազգային սակագների:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը պարտավորվում են պահպանել փոխադարձ համաձայնեցված սանիտարական կանոնները եւ նորմերը, որոնք վերաբերում են տարածքները բնակչության համար հատուկ վտանգ ներկայացնող կարանտինային եւ այլ վարակիչ հիվանդությունների, Կողմերի պետությունների սահմանների անցման կետերով ներկրվող, արտահանվող եւ տարանցիկ փոխադրվող ապրանքների եւ բեռների ներկրումից ու տարածումից պահպանելուն: Նշված սանիտարական կանոնները եւ նորմերն ընդունվում են որպես միջպետական՝ Անկախ Պետությունների Համագործակցության առողջապահության բնագավառում համագործակցության խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 3

Տարածքների սանիտարական պահպանության բնագավառում կանոնավոր համագործակցություն զարգացնելու նպատակով, Կողմերը պարտավորվում են՝

ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մի Կողմի պետության տարածքից մյուս Կողմի պետության տարածք բնակչության առողջության համար հատուկ վտանգ ներկայացնող կարանտինային եւ այլ վարակիչ հիվանդությունների ներթափանցումն ու տարածումը կանխարգելելու համար,

իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ բնակչության առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող ապրանքների ու բեռների ներթափանցումը եւ իրացումը

կանխարգելելու ուղղությամբ՝ դրանք ներկրելիս, արտահանելիս եւ տարանցիկ փոխադրելիս,

փոխանակել տարածքների սանիտարական պահպանության միջոցառումները կարգավորող նորմատիվ-իրավական եւ այլ փաստաթղթեր,

փոխանակել տեղեկություն բնակչության առողջության համար հատուկ վտանգ ներկայացնող կարանտինային եւ այլ վարակիչ հիվանդությունների՝ Կողմերի պետությունների տարածքներում հայտնաբերման ու տարածման վերաբերյալ,

փոխանակել մասնագետներ հետեւյալ նպատակներով.

իրականացնել ապրանքների ընտրովի սանիտարահիգիենիկ ստուգման, դրանց արտադրման եւ նախապատրաստման վայրերում,

օպերատիվ լուծել սանիտարակարանտինային հսկողության հարցերը անցման սահմանային կետերում,

տարածքների սանիտարական պահպանության բնագավառում գոյություն ունեցող համագործակցության շրջանակներում ուսումնասիրել գիտության եւ պրակտիկայի նվաճումները,

միմյանց ցուցաբերել գիտական, տեխնիկական եւ այլ օգնություն՝ տարածքների սանիտարական պահպանությանն ուղղված հակահամաճարակային միջոցառումների իրականացման (համաճարակային օջախների հայտնաբերում, տեղայնացում եւ վերացում) եւ սանիտարակարանտինային հսկողության իրականացման գործում,

համաճարակային բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում ցանկացած Կողմի խնդրանքով գործուղել մեկ կամ մի քանի Կողմերի հակաժանտախտային կամ այլ հակահամաճարակային հիմնարկների մասնագետների:

ՀՈԴՎԱԾ 4

Տարածքների սանիտարական պահպանության բնագավառում Կողմերի կատարած գիտամեթոդական ղեկավարումը, հետազոտական աշխատանքների համակարգումը, ինչպես նաեւ համապատասխան պետական սանիտարահամաճարակային ծառայությունների եւ գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ տարածքների սանիտարական պահպանության հարցերով նորմատիվ փաստաթղթերի, հրահանգների եւ հանձնարարականների համատեղ մշակումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության "Միկրոբ" հակաժանտախտային գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը պարտավորվում են ներկրող Կողմ պետության տարածքի սանիտարական պահպանության մասին գործող օրենսդրությանը համապատասխան ձեռնարկել բոլոր միջոցները մյուս Կողմի պետության տարածք բնակչության առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող ապրանքների եւ բեռների ներկրումն ու տարածումը կանխարգելելու ուղղությամբ:

Մի Կողմի պետության տարածքից մյուս Կողմի պետության տարածք արտահանվող, սանիտարակարանտինային հսկողության ենթակա ապրանքների ու բեռների յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի ազգային պետական սանիտարահամաճարակային ծառայության կողմից տրված հիգիենիկ գնահատականը հաստատող թույլատրման փաստաթղթով: Փաստաթղթում հավաստվում է ապրանքի կամ բեռի համապատասխանությունը ներկրող Կողմի ներկայացրած սանիտարահիգիենիկ պահանջներին: Այդ փաստաթղթի տրման ծախսերը կրում է ապրանքի կամ բեռի տերը՝ համաձայն Կողմի տարածքում ընդունված սակագների:

Սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների կամ բեռների յուրաքանչյուր խմբաքանակ, որը տարանցիկ փոխադրվում է մի Կողմի պետության

տարածքով, պետք է նույնպես ուղեկցվի ուղարկող Կողմի պետական սանիտարահամաճարակային ծառայության կողմից տրված հիգիենիկ գնահատականը հաստատող թույլատրող փաստաթղթով:

Կողմերի լիազորված մարմիններն իրավունք ունեն իրենց պետությունների տարածք սանիտարակարանտինային հսկողության ենթակա ապրանքներ կամ բեռներ ներմուծելիս ներկայացնել լրացուցիչ պայմաններ նման ապրանքի կամ բեռի սանիտարահիգիենիկ վիճակի նկատմամբ: Նշված դեպքերում ներմուծող Կողմի իրավասու մարմինները պետք է հայտնեն արտահանող Կողմի իրավասու մարմիններին ապրանքների եւ բեռների սանիտարահիգիենիկ վիճակին ներկայացվող լրացուցիչ պայմանների, դրանց գործողության ժամկետների մասին եւ այն ապրանքների ու բեռների ցանկի մասին, որոնց վրա տարածվում են դրանք:

ՀՈԴՎԱԾ 6

Մի Կողմի տրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվում են մյուս Կողմի տարածք ուղեւորներ, ապրանքներ եւ բեռներ փոխադրելու համար, ինչպես նաեւ ապրանքների եւ բեռների փոխադրման համար փաթեթավորման տարաները եւ այլ փաթեթավորման նյութերը պետք է համապատասխանեն ընդունող Կողմի սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային պահանջներին:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերի համապատասխան լիազորված մարմինները իրավունք ունեն (արտահանող Կողմի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ) արտահանող Կողմի պետության տարածք վերադարձնել կամ վարակազերծել ապրանքը կամ բեռը՝ ներմուծող Կողմի պետության սահմանային կետում սանիտարակարանտինային հսկողության ժամանակ դրանց
մեջ հայտնաբերվել են բնակչության համար հատուկ վտանգ ներկայացնող կարանտինային
կամ այլ վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կամ փոխանցողներ, իսկ ապրանքի կամ բեռի վերդարձնելու կամ վարակազերծելու անհնարինության դեպքում՝ ոչնչացնել դրանք: Յուրաքանչյուր նման դեպքի մասին ներմուծող Կողմը տեղեկացնում է արտահանող Կողմի համապատասխան մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակիցներն են նրանք եւ չի խոչընդոտում այլ միջազգային պայմանագրերի կնքմանը:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը բաց է սույն Համաձայնագրից բխող պարտավորությունն ստանձնելու պատրաստ այլ պետությունների միացման համար:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն Կողմերի համար, որոնց օրենսդրությունը պահանջում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարում՝ համապատասխան
ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:

Նման ընթացակարգերի կատարման անհրաժեշտության մասին Կողմերը սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից երեք ամսվա ընթացքում ծանուցում են

ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում եւ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:
Ցանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ՝ ձեւակերպված առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով կամ միջազգային իրավունքի նորմերին չհակասող այլ ընթացակարգերի օգտագործմամբ:

Կատարված է Մինսկ քաղաքում 2001 թվականի մայիսի 31-ին մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված 1
Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից
պետությունների տարածքների
սանիտարական պահպանման
բնագավառում համագործակցության
մասին Համաձայնագրին կից

ՑԱՆԿ

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հիվանդության անվանումը	ծածկագիր ըստ ՄՄԴ (ԱՀԿ 9 վերանայում)
Կարանտինային հիվանդություններ	
Ժանտախտ	
Դեղին տենդ	
Խոլերա, այդ թվում՝ 0139	
Այլ վարակիչ հիվանդություններ	
Սիբիրյան խոց	

|Բրուցելոզ |
|Թոքախտ |
|Խլնախտ |
|Մելիոիդոզ |
|Էպիդեմիկ բծավոր տիֆ |
|Կապիկների ծաղիկ |
|Ռիֆտի դաշտավայրի տենդ |
|_____|
| Վիրուսային հեմորագիկ տենդեր |
|_____|
|Մարբուրգ |
|Էբոլա |
|Լասսա |
|Խունին |
|Մաչուպո |
|Մենինգոկոկային վարակ (Հաջ մեկնելիս) |
|Սպոնգիոնման էնցեֆալոպատիա |
._____.

Հավելված 2
Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից
պետությունների տարածքների
սանիտարական պահպանման
բնագավառում համագործակցության
մասին Համաձայնագրին կից

ՑԱՆԿ

սանիտարակարանտինային հսկողության ենթակա ապրանքների եւ բեռների

._____.
Ապրանքի	Ապրանքի կրճատ անվանումը
դասակարգումը	
ըստ ԱՊՀ	
արտաքին	
տնտեսական	
գործունեության	
ապրանքային	
անվանացանկի	
(ԱՏԳ ԱԱ կոդ)	
_____	_____
Խումբ 02	Միս եւ սննդային մսային ենթամթերքներ
_____	_____
0201, 0202,	Տավարի, խոզի, ոչխարի կամ այծի միս՝ թարմ (ոչ պաղեցված),
0203, 0204	պաղեցված կամ սառեցված:
_____	_____
0205 00 000	Ձիու, էշի, մուլի կամ ջորու միս՝ թարմ (ոչ պաղեցված)
	պաղեցված կամ սառեցված:
_____	_____
0206	Սննդային ենթամթերքներ՝ խոշոր եղջերավոր անասունի, խոզի,
	ոչխարի, այծի, ձիու, էշի, մուլի կամ ջորու թարմ (ոչ
	պաղեցված), պաղեցված կամ սառեցված:
_____	_____

0207	Միս եւ սննդային ենթամթերքներ ընտանի թռչունի՝ թարմ (ոչ պաղեցված), պաղեցված կամ սառեցված:
0208	Միս յակի, գոմեշի, սայգակի, կենգուրուի, ուղտի, որմզդեղնի, վարազի, արջի եւ այլն:
0209 00	Խոզի ճարպ, ընտանի թռչնի ճարպ (պաղեցված, ոչ պաղեցված, հալած, ոչ հալած, աղի կամ աղաջրով, չորացրած կամ ապխտած):|
0210	Միս եւ սննդային ենթամթերքներ աղի կամ աղաջրով, չորացրած կամ ապխտած, սննդային ալյուր մսից եւ մսային ենթամթերքներից
Խումբ 03	Ձուկ, խեցեմորթներ, կակղամորթներ, այլ ջրային անողնաշարավորներ
0301, 0302 0303, 0304	Ձուկ կենդանի, պաղեցված եւ սառեցված, մշակված եւ չմշակված, ձկան սուկի, պաղեցված եւ սառեցված:
0305	Ձուկ (մշակված եւ չմշակված) չորացրած, աղի, տաք եւ սառը ապխտած, ալյուր եւ գնդիկներ ձկից՝ սննդային:
0306	Խեցեմորթներ (մշակված եւ չմշակված)՝ կենդանի, պաղեցված, սառեցված, եփած-սառեցված, աղի, չորացրած, ալյուր եւ գնդիկներ խեցեմորթներից:
0307	կակղամորթներ (մշակված եւ չմշակված)՝ կենդանի, պաղեցված, սառեցված, եփած-սառեցված, աղի, չորացրած:
0307	այլ ջրային անողնաշարավորներ (մշակված եւ չմշակված)՝ կենդանի, պաղեցված, սառեցված, եփած-սառեցված, աղի, չորացրած:
Խումբ 04	Կաթ եւ կաթնամթերքներ, թռչնի ձվեր, մեղր բնական, կենդանական ծագման սննդամթերքներ
0401	Կաթ եւ սերուցք՝ չխտացրած ու առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ:
0402	Կաթ եւ սերուցք՝ խտացրած կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ:
0403	Թան, մակարդված կաթ եւ սերուցք, յոգուրտ, կեֆիր, այլ ֆերմենտացված կամ թթվեցրած կաթ եւ սերուցք, խտացրած կամ չխտացրած շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց, հոտավետացված կամ չհոտավետացված, մրգերի, ընկույզների կամ կակաոյի ավելացմամբ կամ առանց դրանց:
0404	Կաթնային շիճուկ, խտացրած կամ չխտացրած, շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց, կաթի բնական տարրերից մթերքներ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց, որոնք այլ տեղ չեն հիշատակվել:

0405 00	Սերուցքային կարագ եւ այլ կաթնային ճարպեր, կաթնային մածուկներ:
0406	Պանիրներ եւ կաթնաշոռ:
0407 00	Թռչնի ձվեր կեղեւով, թարմ, պահածոյացված կամ եփած:
0408	Թռչնի ձվեր առանց կեղեւի եւ ձվի դեղնուց՝ թարմ, չորացրած, եփած գոլորշու վրա կամ եռացրած ջրում, կաղապարված, սառեցված կամ պահածոյացված այլ եղանակով, շաքար կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց:
0409 00 000	Մեղր բնական:
0410 00 00	Կենդանական ծագումով սննդամթերքներ, այլ տեղում չնշված:
Խումբ 07	Բանջարեղեններ եւ որոշ ուտելի արմատապտուղներ եւ պալարապտուղներ
0701	Կարտոֆիլ թարմ կամ պաղեցված:
0702 00	Տոմատներ թարմ կամ պաղեցված:
0703	Գլուխ սոխ, սոխ մանր (շարլոտ), սոխ պրաս, սխտոր եւ այլ կոճղեզավոր բանջարեղեն, թարմ կամ պաղեցված:
0704	Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղգամակաղամբ, բրոկկոլլի եւ այլ նմանատիպ ուտելի բանջարեղեն:
0706	Գազար, շաղգամ, բազուկ սեղանի, արմատային նեխուր, բողկ եւ այլ նմանատիպ ուտելի արմատապտուղներ:
0707 00	Վարունգներ եւ մանր վարունգ:
0708	Ընդեղեն (կլպած եւ չկլպած):
0709	Այլ բանջարեղեններ՝ սմբուկներ, պղպեղ, արտիշոկ, ծնեբեկ եւ այլն:
Խումբ 08	Ուտելի պտուղներ, ընկույզներ, բոստանային կամ ցիտրուսային կուլտուրաների կճեպներ եւ կեղեւներ
0801	Ընկույզներ՝ կոկոսային, բրազիլական եւ կեշյու թարմ կամ չորացրած, կլպված կամ չկլպված, կեղեւով կամ առանց կեղեւի:
0802	Այլ ընկույզ՝ նուշ, ընկույզ անտառային, ընկույզ հունական, շագանակ, պիստակ եւ այլն:
0803 00	Ադամաթուզ:
0804	Խուրմա, թուզ, անանաս, ավոկադո, մանգո թարմ կամ չորացրած:
0805	Ցիտրուսային պտուղներ թարմ կամ չորացրած:

0806	Խաղող՝ թարմ կամ չորացրած:
0807	Սեխ, ձմերուկ եւ պապայա թարմ:
0808	Խնձորներ, տանձեր եւ սերկեւիլ թարմ:
0809	Ծիրաններ, բալ, կեռաս, դեղձ (ներառյալ՝ նեկտարայինները):
0810	Այլ պտուղներ թարմ՝ մորի, իծամորի, մոշ, հաղարջ, լոռամրգի, հապալաս, հապալասենի եւ այլ հատապտուղներ:
0811	Պտուղներ եւ ընկույզներ (թարմ կամ եփած ջրում կամ գոլորշու վրա), սառեցրած, շաքարի կամ քաղցրացնող նյութերի ավելացումով:
0814 00 000	Ցիտրուսային պտուղների կեղեւը կամ բոստանային կուլտուրաների կճեպները (թարմ, սառեցրած, չորացրած կամ պահածոյացված՝ աղաջրում կարճատեւ պահելու համար):
Խումբ 09	Սուրճ, թեյ եւ համեմունքներ
0901	Սուրճ բոված կամ չբոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի հատիկների թաղանթներ եւ պտղամիս, սուրճ պարունակող սուրճի փոխարինողներ:
0902	Թեյ հոտավետացված կամ չհոտավետացված (կանաչ եւ սեւ):
0904	Պղպեղ չորացրած, ջարդված կամ աղացած:
0905 00 000	Վանիլին:
0906	Դարչին եւ դարչինածառի ծաղիկներ:
0907 00 000	Մեխակ (ամբողջական պտուղներ, ծաղիկներ):
0908	Մուսկատային ընկույզ, մացիս, հիլ:
0909	Անիսոնի, բադյանի, ֆենխելի, գինձի, չամանի սերմեր, գիհիի պտուղներ:
0910	Իմբիր, շափրան, քրքում, ուրց, ծոթոր, դափնու տերեւ եւ
0910	այլն:
Խումբ 10	Հացի հացաբույսեր (բացի սերմերից եւ կերի հատիկներից)
1001	Ցորեն եւ ցորնաաշորային խառնուրդ (մեսլին):
1002 00 000	Տարեկան, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ, հնդկացորեն,
1003 00,	կորեկ եւ այլ հատիկավորներ:
1004 00,	
1005, 1006	
1007 00, 1008	

Խումբ 11	Ալրաղացման-մանրաձավարային արդյունաբերության արտադրանք, ածիկ, օսլա, ցորենային սնձան
1101 00	Ցորենի կամ ցորնաաշորային, բրնձային, եգիպտացորենային
1102	ալյուր, ինչպես նաեւ այլ հատիկավորների ալյուր:
1103	Մանրաձավար եւ հատիկավորների հատիկները:
1105	Ալյուր, մանրաձավար, կարտոֆիլային փաթիլներ եւ հատիկներ:
1106	Չորացրած ընդավոր բանջարեղեններից ալյուր եւ մանրաձավար:
1107, 1108	Ածիկ բոված կամ չբոված, օսլա:
Խումբ 12	Ձիթապտղի սերմեր եւ պտուղներ, դեղաբույսեր եւ բույսեր տեխնիկական նպատակների համար
1212 00 00	Ջրիմուռներ չորացրած եւ սառեցրած, ալյուր եւ մանրացվածք ջրիմուռներից:
Խումբ 15	Ճարպեր եւ յուղեր կենդանական կամ բուսական ծագման, դրանց մշակումից ստացված մթերքներ
150100	Խոշոր եւ մանր եղջերավոր անասունների, տնային թռչնի ճարպ,
1502 00	Խոզի ճարպ՝ հալեցրած կամ չհալեցրած:
1504	Յուղ, կարագ եւ դրանց ֆրակցիաներ ձկներից կամ ծովային կաթնասուններից:
1507-1516	Բուսական յուղ եւ դրանց ֆրակցիաներ:
1517	Մարգարին:
1518 00	Այլ յուղեր եւ ճարպեր
Խումբ 16	Արտադրանք մսից, ձկից կամ խեցեմորթներից, փափկամորթներից կամ այլ ջրային անողնաշարավորներից
1601 00	Երշիկներ եւ նմանատիպ մթերքներ մսից, մսային ենթամթերքներից կամ արյունից, սննդամթերքներ պատրաստված դրանց հիմքով:
1602	Այլ պատրաստի կամ պահածոյացված մթերքներ մսից, մսային ենթամթերքներից կամ արյունից:
1604, 1605	Պրեսսերվներ ձկից, փափկամորթներից, խեցեմորթներից, այլ ջրային անողնաշարավորներից եւ ջրիմուռներից:
1604 1605	Խոհարարական արտադրանք ձկից, փափկամորթներից, խեցեմորթներից, այլ ջրային անողնաշարավորներից եւ ջրիմուռներից:
1604 1605	Պատրաստի կամ պահածոյացված մթերքներ ձկից՝ խավիար թառափազգիների (սեւ խավիար), խավիար սաղմոնազգիներից

| | |(կարմիր) եւ խավիարի փոխարինիչներ՝ պատրաստված այլ |
	|ծովային ձկներից, ձուկ կտրատած կամ ամբողջական:
1605 20	Եփած կամ սառեցված կրիլի միս, կրիլի ալյուր
Խումբ 17	Շաքար եւ շաքարային հրուշակեղեն
1701	Եղեգնաշաքար կամ ճակնդեղի շաքար եւ քիմիական մաքուր
	|սախարոզա պինդ վիճակում:
1702	Շաքարի այլ տեսակներ, ներառյալ քիմիական մաքուր լակտոզան,| |մալտոզան, գլյուկոզան եւ ֆրուկտոզան՝ պինդ վիճակում:
1704	Շաքարային հրուշակեղեն (ներառյալ սպիտակ շոկոլադ)՝ առանց
	|կակաոյի պարունակության:
Խումբ 18	Կակաո եւ դրանից պատրաստված արտադրանքներ
1801 00 00	Կակաո-ընդեղեն, ամբողջական եւ մասնատված, հում կամ բոված:|
1802 00 000	Կակավելա (թեփը, թաղանթը, կճեպը) եւ կակաոյի այլ
	|մնացորդներ:
1803	Կակաո-մածուկ ճարպազրկված կամ չճարպազրկված:
180400 000	Կակաո-կարագ, ճարպ եւ հեղուկ յուղ կակաոյից:
180500 000	Կակաո-փոշի առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի
	|ավելացման:
1806	Շոկոլադ եւ կակաո պարունակող այլ սննդամթերքներ:
Խումբ 19	Արտադրանք հացահատիկային սերմերից, ալյուրից, օսլայից եւ
	|կաթից, խմորից հրուշակեղենային արտադրանք
1901	Աձիկային լուծամզվածք (էքստրակտ), ալյուրից,
	|մանրաձավարից, օսլայից կամ աձիկային լուծամզվածքից
	|սննդամթերքներ:
1901 10 000	Մանկական սննդի մասնագիտացված արտադրանք:
1902	Մակարոնեղեն՝ եփված եւ չեփված, միջուկով կամ առանց
1902	|միջուկի:
190300 000	Տապիոկա կամ դրա փոխարինիչներ:
1904	Պատրաստի արտադրանք՝ ստացված հացահատիկային աձիկի
	|ուռեցման կամ բովման միջոցով կամ հատիկային մթերքից:
1905	Հաց, ալյուրից հրուշակեղենի արտադրանք, թխվածք եւ այլ
	|հացաբուլկեղենային եւ ալյուրից հրուշակեղենի արտադրանք:
Խումբ 20	Բանջարեղենների, պտուղների, ընկույզների կամ բույսերի այլ| |մասերի վերամշակման մթերքներ

2001	Բանջարեղեններ, մրգեր, ընկույզներ եւ բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախում կամ քացախաթթվում:
2002	Տոմատներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի ավելացման:
2003 2003 20 000	Սնկեր եւ գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի ավելացման:
2004, 2005	Այլ բանջարեղեններ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի ավելացման, սառեցված կարտոֆիլ, այլ բանջարեղեններ կամ բանջարեղենային խառնուրդներ:
2006	Պտուղներ, ընկույզներ, պտուղների կլեպ եւ բույսերի այլ մասեր՝ պահածոյացված շաքարում (օշարակով ներծծված, գլազուրացված):
2007	Ջեմեր, պտուղ-հատապտղային ժելե, մարմելադներ, պտուղ-հատապտղային պյուրե, ընկուզային՝ անցած ջերմային մշակում, այդ թվում շաքարի, այլ քաղցրացնող նյութերի կամ սպիրտի ավելացումով:
2009	Մրգային հյութեր (ներառյալ՝ խաղողի շիրան) եւ բանջարեղենային հյութեր՝ չխմորված եւ առանց սպիրտի ավելացման, շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացումով կամ առանց դրանց:
Խումբ 21	Այլ տարբեր սննդամթերքներ
2101	Սուրճի էքստրակտներ, էսենցիաներ եւ կոնցենտրատներ, թեյի կամ մատեի էքստրակտների, էսենցիաների, սուրճի, կոնցենտրատների հիմքով արտադրանք, բոված ցիկորի եւ սուրճի այլ բոված փոխարինիչներ:
2102	Խմորիչներ (ակտիվ կամ ոչ ակտիվ), արդյունաբերական միկրոօրգանիզմներ եւ մերաններ:
2103	Մթերքներ սոուսների պատրաստման համար եւ պատրաստի սոուսներ, համային հավելումներ, համեմունքներ խառը, սննդային հավելումներ, կենսաբանորեն ակտիվ հավելումներ (նուտրիցեվտիկներ):
2104	Սուպեր եւ արգանակներ, պատրաստի նախապատրաստուկներ դրանց պատրաստման համար, սննդամթերքի հոմոգենացված խառնուրդներ:
2105 00	Պաղպաղակ եւ սննդային սառույցի այլ տեսակներ:
2106	Սննդամթերքներ, այլ տեղերում չնշված:
Խումբ 22	Ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային ըմպելիքներ եւ քացախ
2201	Ջրեր հանքային եւ գազեցված:

2202	Ջրեր, ներառյալ հանքային գազեցված շաքարի կամ այլ քաղցրացնող կամ հոտավետ նյութերի ավելացմամբ, այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ:
220300	Գարեջուր ածիկային:
2204	Գինիներ խաղողի բնական, այդ թվում թնդեցված:
220410	Գինիներ փրփրուն, շամպայն:
2204 10 110	
2205	Վերմուտներ եւ այլ խաղողի գինիներ բնական՝ բուսական կամ հոտավետ էքստրակտների ավելացմամբ:
2208	Թունդ սպիրտային խմիչքներ, լիկյորներ եւ այլ ալկոհոլային ըմպելիքներ, սպիրտային բաղադրիչային կիսաֆաբրիկատներ, որոնք օգտագործվում են ըմպելիքների պատրաստման համար:
2209 00	Քացախ եւ դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից, գինու քացախ:
Խումբ 24	Ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ
2401	Ծխախոտային եւ սիգարային հումք:
2402	Ծխախոտ (այդ թվում սիգարներ կտրատված ծայրերով), սիգարելլաներ (բարակ սիգարներ) եւ ծխախոտ թութունից կամ դրա փոխարինիչներից:
2403	Ծխախոտ ծխամորճային եւ ծխելու:
3302, 350610	Բաղադրիչներ ծխախոտի եւ սիգարների (սիգարելլաների)
4813	արտադրության համար, ծխախոտային ֆիլտրեր, հոտավետիչներ,
482320000	սոսինձ, ծխախոտային (պապիրուսային) թուղթ, ուղեկցող
9614	ապրանքներ եւ ծխախոտ ծխելու հարմարանքներ, ֆիլտր-մուշտուկներ:
Խումբ 25	Աղ
2501 00 990	Մարդու կողմից օգտագործելու համար պիտանի աղ:
Խմբեր 28, 29	Թթուներ
2809	Օրթոֆոսֆորական թթու:
2915 50 000	Պրոպիոնաթթու:
2916 19 300	Սորբինաթթու:
2916 31 00	Բենզոյական թթու:
2917	Ֆիտինաթթու:

2917	Ֆումարաթթու:
2917	Սաթաթթու:
2918 12 000	Գինեթթու:
2918 14 000	Կիտրոնաթթու:
2918 19 000	Քացախաթթու, անտառաքիմիական սննդային:
2936 27 000	Ասկորբինաթթու:
Խումբ 33	Եթերայուղեր եւ ռետինոիդներ, օծանելիքային դիմահարդարային եւ հարդարանքի միջոցներ
Խումբ 34	Օճառ, մաքրող միջոցներ, սինթետիկ մաքրող նյութեր
Խումբ 35	Սպիտակուցային նյութեր, ձեւափոխված օսլա
3503 00	Ժելատին
Խումբ 39, 69	Արտադրանք պոլիմերային, ֆարֆորային եւ կերամիկական նյութերից
3920	Պոլիմերային նյութեր, նախատեսված սննդամթերքների հետ շփման համար:
3924	Ամանեղեն պոլիմերային, ֆարֆորային եւ կերամիկական նյութերից՝ նախատեսված սննդամթերքների հետ շփման համար:
3920	Պոլիմերային նյութեր մանկական հագուստի, կոշիկի եւ խաղալիքների պատրաստման համար:
3917	Պոլիմերային նյութեր, օգտագործվող ջրամատակարարման համար:
39, 48, 70, 73, 76 խմբերից	Տարա
3923-ից	Արկղեր պոլիմերային բազմաշրջանառու բանջարեղենների եւ մրգերի համար:
3923-ից	Արկղեր պլաստմասսե բազմաշրջանառու հացաբուլկեղենային արտադրանքի համար:
3923-ից	Արկղեր պոլիմերային բազմաշրջանառու մսային եւ կաթնային արդյունաբերության համար:
4819-ից	Արկղեր գոֆրեացված ստվարաթղթից պաղպաղակի համար:
4819-ից	Արկղեր գոֆրեացված ստվարաթղթից հրուշակեղենային արտադրանքի համար:
4819-ից	Արկղեր գոֆրեացված ստվարաթղթից մսային եւ կաթնային արդյունաբերության համար:

4819-ից	Արկղեր գոֆրեացված ստվարաթղթից սննդամթերքի, լուցկու, ծխախոտի եւ լվացող միջոցների համար:
7010-ից	Ապակե տարա (բանկաներ, շշեր) արդյունաբերական եւ տնտեսական նշանակության սննդամթերքի համար:
7310-ից	Մետաղե բանկաներ պահածոների համար:
7612-ից	Մետաղական ֆլյագաներ կաթի եւ կաթնամթերքների համար:
Խումբ 48	Թուղթ
4805	Թուղթ՝ ավտոմատների միջոցով սննդամթերքների փաթեթավորման համար:
Խումբ 48	Ստվարաթուղթ
4805 40 000	Ֆիլտրող ստվարաթուղթ սննդային հեղուկների համար:
73, 74, 75, 76 խմբերից	Ամանեղեն սեւ եւ գունավոր մետաղներից
732394-ից	Ամանեղեն տնտեսական պողպատյա էմալապատ:
7323-ից	Ամանեղեն կոռոզիակայուն պողպատից:
7323 93 000	Ամանեղեն տնտեսական չուգունե էմալապատ:
7418-ից 7508	Ամանեղեն մելխիորից, արույրից, նեյզիլբերից քրոմային կամ նիկելային ծածկույթով:
7418-ից 7508	Ամանեղեն մելխիորից, նեյզիլբերից՝ ոսկյա կամ արծաթյա ծածկույթով:
7615-ից	Ամանեղեն տնտեսական թիթեղյա ալյումինից:
Խումբ 84	Սարքավորումներ
	Բաժնեծրարող-փաթեթավորող սարքավորումներ սննդային, մսա-կաթնային եւ ձկնային արդյունաբերության համար:
	Սարքավորումներ չափափաթոցման-փաթեթավորման:
8422-ից, 8423, 8434, 8437	Շաքարային եւ օսլա-մաթով արդյունաբերության համար:
8438	Հացաթխման, մակարոնային եւ հրուշակային արդյունաբերության համար:
եւ այլ	Խաղողագործական, սպիրտային եւ օղու-լիկյորային արդյունաբերության համար:
	Պահածոյացման եւ սննդակոնցենտրատների արդյունաբերության

	համար:
	Կարագ-ճարպային արդյունաբերության համար:
	Թեյի, ծխախոտի, աղի եւ ֆերմենտային արդյունաբերության համար:
	Գարեջրագործական, ոչ ալկոհոլային եւ խմորիչային արդյունաբերության համար:
	Մսային եւ թռչնավերամշակման արդյունաբերության համար:
	Կաթնային արդյունաբերության համար:
	Ձկների վերամշակում:
	Տեխնոլոգիական սարքավորումներ կաթնային արտադրության համար:
8418-ից	Սառնարանային պահարաններ:
8418-ից	Սառնարանային խցիկներ:
841850-ից	Վաճառասեղաններ, սառնարանային վաճառասեղան-ցուցափեղկեր:
841850-ից	Սառնարանային ցուցափեղկեր:
84	Սննդաեփման կաթսաներ գոլորշային եւ էլեկտրական տաքացմամբ:
8419-ից	Խոհանոցային սալաքարեր էլեկտրական տաքացմամբ:
8419-ից	Սննդաեփման եւ տապակման տաքացուցիչ սարքավորումներ:
8419-ից	Ծրջվող տապակներ, թավաներ եւ ֆրիտյուրնիցաներ էլեկտրական տաքացմամբ
8516	Անընդմեջ գործող եռացուցիչներ:
8516	Ջրատաքացուցիչներ, թերմոստատներ:
8419-ից	Մարմիտներ:
8419-ից	Ծոգեխաշման սարքավորումներ:
8419-ից	Պահարաններ ջերմային տարածական, միջանցիկ, շարժական:
8474 39 00	Խառնող-հարող մեքենաներ:
8422	Սարքավորում սննդի բաշխման համար:
8422	Սարքավորումներ բանջարեղենի եւ մրգերի չափաբացթողման եւ փաթեթավորման համար:
8422	Սարքավորում առեւտրի ձեռնարկություններում

	չափաբացթողման-փաթեթավորման համար:
8474 39 000	Էլեկտրական խնոցի:
8479	Բանջարեղենակտրիչներ, կտրատիչներ, քերիչներ, սրբող մեքենաներ եւ սարքավորումներ:
8479	Հարիչներ, խառնիչներ, պաղպաղակարար մեքենաներ:
8479	Կարտոֆիլմաքրիչներ:
8479	Բանջարեղենակտրիչներ:
8479	Հացակտրիչներ:
8479	Երշիկակտրիչներ, պանրակտրիչներ:
8479	Մեքենաներ մրգերի, վարունգների, լոլիկների եւ այլնի մանրելու համար:
8479	Հարմարանքներ խմորից եւ մածուցիկ նյութերից արտադրանքի ձեւավորման համար:
8422	Հարմարանքներ շշերի եւ պահածոների բացման եւ կրկնակի փակման համար:
8479	Մեքենաներ եւ հարմարանքներ սոխի, սխտորի, կանաչու կտրատման համար:
8479	Արիշտակտրիչներ:
8479	Ձու կտրիչներ:
8479	Սրճաղացներ:
8479	Մեքենաներ պաքսիմատների, ընկույզների եւ սխտորի ճզմման եւ տրորման համար:
8479	Հարմարանքներ պելմենիների, վարենիկների, թխվածքաբլիթների ձեւավորման, արտադրանքի կրեմով ձեւավորման համար:
8479	Մեքենաներ կարտոֆիլի եւ բանջարեղենի լվացման եւ մաքրման համար:
8422-ից	Ամանեղեն լվացող մեքենաներ:
8479	Հարմարանքներ դանակների սրման համար, ճաշի սպասքի եւ խոհանոցային գույքի մաքրման եւ փայլեցման համար:
8479	Մեքենաներ տնային պահածոյացման համար:
8479	Մամլիչներ, հյութաքամիչներ, այլ հարմարանքներ հյութի ստացման համար:

8479	Խոհանոցային ձեռքի կտրիչներ եւ մաքրիչներ:
8479	Տնային պայմաններում պահածոյացման համար, այլ՝ մթերքների մասնատման եւ մշակման հարմարանքների հավաքածու:
8479	Հրուշակային ներարկիչներ:
8479	Հարիչներ, խառնիչներ:
8479	Ձեռքի կոտրիչներ:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի դեկտեմբերի 26-ից: